# Փ Ո Խ Ը Մ Բ Ռ Ն Մ Ա Ն Հ Ո Ւ Ի Շ Ա Գ Ի Ր

## «ՀԱՅԿԱԿԱՆԿԱՐԻՏԱՍ»ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆՀԱՍԱՐԱԿԱԿԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

**Ք. Վանաձոր 10 հունիսի 2019թ.**

Սույն հուշագիրը կնքվում է **«ՀայկականԿարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը** (այսուհետ՝ՀԿ), որը գործում է ՀԿ կազմակերպության կանոնադրության հիման վրա՝ ի դեմսկազմակերպության գործադիր տնօրեն **Գագիկ Տարասյանի**,մի կողմից, **և Հայաստանի ՀանրապետությանԼոռու մարզպետարանի (այսուհետ՝ ԼՄ) հետ, որը գործում է ԼՄ կանոնադրության հիման վրա՝ ի դեմս ՀՀ Լոռու մարզպետ՝Անդրեյ Ղուկասյանի, մյուս կողմից**

(ՀԿեւ ԼՄ միասին, այսուհետ՝Կողմեր), հաստատում են իրենց մտադրությունը ներքոհիշյալ հարցերում՝

**Նկատի ունենալով**, որ Կողմերը ընդունում են միմյանց անկախությունը և կնքում են սույն հուշագիրը փոխադարձ վստահության, հարգանքի և պատասխանատվության ոգով,

**Հաշվի առնելով**, որ սույն հուշագիրը հանդիսանում է երկկողմանի գործողությունների սահմանում, որի շուրջ Կողմերը պատրաստակամություն են հայտնում համագործակցելու,հուշագիրը չի սահմանափակում Կողմերի իրավունքները՝ անկախ աշխատել մարդասիրական և զարգացման ծրագրեր իրականացնող այլ կազմակերպությունների հետ,

**Կարևորելով**, ՀՀ Լոռու մարզում խոշորացված համայնքներում կարևորագույն խնդիրների լուծմանն աջակցելուանհրաժեշտությունընեքաղաքացիական մասնակցության, ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականության, թափանցիկության և հրապարակայնությանբարձրացումը,

**Նպաստելով** ՀՀ Լոռու մարզի համայնքներում քաղաքացիների սոցիալ-տնտեսական դրության բարելավմանը,

**Ընդգծելով** համայնքային ծառայությունների որակի բարձրացման հարցում ՏԻՄ-երի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կարողությունների զարգացման շարունակական գործընթացի կազմակերպման կարևորությունը,

**Հաշվի առնելով** Կազմակերպության կանոնադրական նպատակները և գործունեության տեսլականը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում համայնքների զարգացման գործում,

**Ելնելով** սոցիալական պետության համար հիմնարար՝ սոցիալական գործընկերության սկզբունքից,

**Ընդունելով** Կողմերի կողմից իրականացվող գործողությունների ներդաշնակեցման և արդյունավետության բարձրացման կարևորությունը համայնքների շարունակական զարգացման գործում,

Կողմերը համաձայնում են համագործակցել համաձայն հետևյալի.

Հոդված 1.

Սույն Փոխըմբռնման հուշագիրը նպատակ է հետապնդում նպաստել ԼՄ և ՀԿ-ի միջև նոր մակարդակի, բազմակողմանի համագործակցության կայացմանը:

Հոդված 2.

Կողմերը պայմանավորվում են սույն Փոխըմբռնման հուշագրով իրենց կազմակերպությունների ներքին կանոնակարգերին և ռազմավարություններին համապատասխան իրականացնել ՀՀ Լոռու մարզի համայնքների կայուն զարգացմանն ուղղված համագործակցային համակարգված քայլեր:

Հոդված 3.

1. **Հայկական Կարիտասը** սույն Փոխըմբռնման հուշագրով նախատեսվող համագործակցությունն իրականացնելու համար պայմանավորվում է հետևյալի մասին.
   1) Տրամադրել տեղեկատվություն ՀԿ-ի համայնքային զարգացման ոլորտում իրականացվող գործունեության վերաբերյալ, ինչպես նաև տրամադրել կազմակերպության կողմից այդ ոլորտին վերաբերող մշակված նյութեր, վերլուծություններ և ձեռնարկներ.
   2) Հաշվի առնել ՀՀ պետական քաղաքականությունից և Լոռու մարզի կարիքներից բխող առաջնահերթությունների ներառումը նոր մշակվող համայնքային զարգացման ոլորտային ծրագրերի պլանավորման փուլերում.
   3) ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձարցման, հաշվետվողականության, թափանցիկության, հրապարակայնության և քաղաքացիական մասնակցության խթանման արդյունավետ մեխանիզմների ներդրման, ֆոնդհայթայթման հնարավորությունների ընդլայնման նպատակով ներգրավել տեղական կառավարման ներկայացուցիչներին կարողությունների զարգացման գործընթացին:
   5) Ծրագրերի և միջոցների առկայության դեպքում համատեղ համաֆինանսավորել այն համայնքային ծրագրեր, որոնք ունեն համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ՝ ստանալու պետական, մասնավոր և հանրային ֆինանսավորման աղբյուրներ:
   6) Աջակցել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարձրացմանը, խթանելով ՔՀԿ-ների մասնակցությունը և ներդնել նորարարական մեխանիզմներ համայնքներում՝ հասարակական վերահսկման մեխանիզմների զարգացման նպատակով.
   7) Գործունեության ընթացքում ցանկացած ռազմավարական և կանոնադրական փոփոխության կամ համագործակցության վրա ազդող այլ տեսակի խնդիրներ ծագելու դեպքում տեղյակ պահել ԼՄ-ին:

2. **Լոռու մարզպետարանը**սույն Փոխըմբռնման հուշագրով նախատեսվող համագործակցությունն իրականացնելու համար պայմանավորվում է հետևյալի մասին.

1) Համայնքների զարգացման ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակներում ԼՄ-ն կհամագործակցի ՀԿ-ի հետ՝ կիրառելով առկա լավագույն փորձը՝ աշխատանքները համակարգելու, միասնական մոտեցումներ ձևավորելու, ռեսուրսներն առավել նպատակային օգտագործելու նպատակով:

2) ԼՄ-ն կապահովի ՀԿ-ի մասնակցությունը խոշորացված համայնքների զարգացման ոլորտում իրականացվող օրենսդրական և ծրագրային բարեփոխումների գործընթացներում և կտրամադրի համապատասխան տեղեկատվություն:

3) ԼՄ-ն կաջակցի ՀԿ-ին համայնքային զարգացմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացմանը՝ հետազոտական, կարողությունների զարգացման միջոցառումների, տարբեր ձևաչափի հանրային քննարկումների, հանդիպումների, ոլորտային վերապատրաստումների,հանդիպումների, քննարկումների մասնակիցների ուղորդմամբ և մասնակցության ապահովմամբ:

4) Ըստ անհրաժեշտության, ԼՄ-ն համայնքների զարգացման ոլորտում գործող հանձնաժողովների, փորձագիտական խմբերի աշխատանքներում, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներում կներգրավի Կազմակերպության մասնագետներին:

Հոդված 4.

4.1. Սույն Փոխըմռնման հուշագիրն ուժի մեջ կմտնի Կողմերի ստորագրման պահից և գործում է Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 2021 թ.-ը:

4.2. Սույն Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի գրավոր ծանուցմամբ:

Հոդված 5.

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Փոխըմբռնման հուշագիրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք կձևակերպվեն գրավոր՝ նշելով այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետները:

Հոդված 6.

6.1 Սույն Փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Կողմերի միջև վեճի ծագման դեպքում այն ենթակա է կարգավորման Կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով:

6.2 Սույն հուշագիրը վաղաժամկետ լուծել ցանկացող կողմը պարտավոր է մյուս կողմին իր մտադրության մասին գրավոր տեղեկացնել առնվազն 30 օր առաջ:

6.3 Սույն հուշագիրը վաղաժամկետ կարող է լուծվել կողմերից որևէ մեկի պահանջով:

6.4 Սույն հուշագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում, ինչպես նաև հայտարարություն կամ ծանուցում բխած կամ կապված սույն հուշագրի հետ պետք է լինի գրավոր ձևով:

6.5 Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 7.

7.1. Առաջարկվող բազմակողմանի համագործակցությունը կոչված է նպաստելու ԼՄ և ՀԿ կողմից իրականացվող համակարգված քայլերին, որոնք նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում համայնքների շարունակական զարգացմանը:

7.2. Կողմերի միջև համագործակցությունը համահունչ է Կողմերի գործունեության հիմնարար և ռազմավարական փաստաթղթերին:

7.3. Սույն հուշագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 /երկու/ օրինակից՝ հայերեն լեզվով, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

6.Կողմերի տվյալները և ստորագրությունները.

| | |
|---|---|
| «ՀայկականԿարիտաս» | Հայաստանի Հանրապետության |
| բարեսիրականհասարակականկազմակերպություն | Լոռու մարզպետարան |
| Գործադիրտնօրեն՝ Գագիկ Տարասյան | ՀՀ Լոռու մարզպետ՝Անդրեյ Ղուկասյան |
| Կ.Տ. (ստորագրություն) | Կ.Տ. (ստորագրություն) |